ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ -189-2023
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «30» «03» 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրեն Ա. Կարապետյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ որոշման «1148. Արտադպրոցական դաստիարակության ծրագրի» «11012. «Քո արվեստը դպրոցում» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում իրականացնել «Քո արվեստը դպրոցում» նախագծի կազմակերպումը (այսուհետ՝ միջոցառումներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. ծրագրի՝ Հավելված N 1,

1.1.2. նախահաշվի՝ Հավելված N 2:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջոցառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,
բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),
գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,
2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,
2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը,
2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,
2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,
2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,
2.2.4. վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,
2.2.5. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և (կամ) ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,
2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,
2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,
2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու

օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են կազմակերպությանը լրամշակման՝ սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1-ին կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին,

2.4.4. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.5. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.7. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.8. սույն պայմանագրի 4.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.4.9. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.10. հրապարակել պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության,

ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.11. սույն պայմանագրից բխող միջոցառումները չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5,0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.12. իրականացնել միջոցառումների շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.13. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

2.4.14. սույն պայմանագրով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան սույն պայմանագրի 4.1-ին կետով հաշվետվությունների համար սահմանված ժամկետից հետո 10 օրվա ընթացքում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանը հատկացնում է 70611,1 հազար (յոթանասուն միլիոն վեց հարյուր տասնմեկ հազար հարյուր) դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը Կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո՝ համաձայն Հավելված N 5-ի, իսկ 20%-ը սույն պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2023 թ. դեկտեմբերի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը, սակայն ոչ ուշ, քան 2023 թվականի դեկտեմբերի 10-ը:

4.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումները կազմակերպության կողմից ներկայացվում են պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն (Հավելված N 4):

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից

չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված
պարտավորության համար նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:
6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար՝ սույն պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:
6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառումների իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:
6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:
6.7. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:
6.8. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:
6.9. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:
7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:
7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:
9.2. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:
9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ
Երևան, Վ. Սարգսյան 3	Երևան, Իսահակյան 28
Կառավարական տուն N 2	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ 900018001678 հվհհ 02514349
Հ/Հ 900011026425, հվհհ 02698732	Հեռ. 055 99 19 19
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն
Հ. Հակոբյան	Ա. Կարապետյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ. Տ.	Կ. Տ.

Հավելված N 1
«30» «03» 2023 թ.
N ՄՇԴ-189-2023 պայմանագրի

Ծ Ր Ա Գ Ի Ր

«Քո արվեստը դպրոցում» նախագծի

1	Կազմակերպության անվանում	«Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	ՀՀ, ք. Երևան, Իսահակյան 28
3	Ծրագրի անվանում	«ՔՈ ԱՐՎԵՍՏԸ ԴՊՐՈՑՈՒՄ. մասնագիտության որոնումներում» հանրապետական ծրագիր
3.1	Բովանդակություն	Նախագծի շրջանակներում իրականացվելու են Հայաստանի մշակութային գործիչների, արվեստագետների կյանքի ու գործունեության ճանաչելիության բարձրացմանն ուղղված միջոցառումներ: Նախատեսվում է իրականացնել հանդիպում-քննարկումներ 50 արվեստագետների հետ: Հանդիպում-քննարկումները կունենան հատուկ ընտրված խորագրային թեմաներ, որոնց օգնությամբ կբացահայտվեն արվեստի պատմությանը, նպատակներին ու խնդիրներին առնչվող ուշագրավ փաստեր ու տեղեկություններ: Թեմաների ընտրությունը կկատարվի՝ աշակերտների տարիքային խմբերի առանձնահատկությունները հաշվի առնելով: Նախատեսվում է հանդիպումներն իրականացնել ինտերակտիվ ձևաչափով. երեխաները հնարավորություն կունենան ոչ միայն տեսական գիտելիքներ ստանալու, այլ նաև անմիջականորեն մասնակցություն կունենան հյուրի կողմից տեղում անցկացվող վարպետության դասին, ինչը հետագայում կարող է օգնել նրանց մասնագիտական կողմնորոշման հարցում: Յուրաքանչյուր հանդիպման ընթացքում կլինի հարցուպատասխանին նվիրված հատված, որը կնպաստի աշակերտ-արվեստագետ առավել անմիջական շփմանը և երեխաներին հետաքրքրող հարցերի պարզաբանմանը: Հանդիպումները տեսագրվելու, մոնտաժվելու և պատրաստվելու են որպես հեռուստահաղորդումներ: Հանդիպումից հետո միայն հեռուստահաղորդման համար կնկարահանվի նաև փոքրիկ հարցազրույց արվեստագետի հետ, որը հնարավորություն կտա հեռուստադիտողին՝ ճանաչելու նրան այլ դիտանկյուններից: Հեռուստահաղորդումներում, բացի բուն հանդիպման հատվածից և հարցազրույցի բաժնից, կլինի նաև արվեստագետին նվիրված ճանաչողական կարճ ֆիլմ, որը կտարածվի սոցիարթակներում (Facebook, Youtube) հեռուստահաղորդումը եթեր հեռարձակելուց առաջ և կտեղեկացնի հեռուստադիտողին տվյալ հաղորդման հյուրի մասին: Բոլոր հեռուստահաղորդումները եթեր հեռարձակվելուց հետո կտեղադրվեն նաև սոցցանցում, ինչի արդյունքում հնարավորինս բաց հասանելիություն կապահովվի բոլոր հետաքրքրվողների համար: Սոցցանցի հարթակներում կտեղադրվեն նաև հանդիպումներին զուգորդվող ֆոտոպատմություններ:
3.2	Նպատակ	Նախագիծը նպատակ ունի՝ Մեծացնել արվեստագետների ճանաչելիությունը աշակերտների շրջանում Ուղղորդել երեխաներին մշակութային ոլորտում մասնագիտությունների ընտրության հարցում Ձևավորել քաղաքացու և արվեստագետի դրական պատկեր և մեծացնել արվեստագետի հանրային վարկանիշը Ամրապնդել բարեկիրթ միջանձնային հարաբերությունները հանրակրթական ուսումնական հաստատություններում Ստեղծել բարենպաստ պայմաններ աշակերտների ինքնաբացահայտման և

		ինքնաճանաչման համար Ամրապնդել մշակութային բաղադրիչը հանրակրթության համակարգում Արդիականացնել մշակութային բովանդակության փոխանցման եղանակները Գրավիչ դարձնել արվեստը և դրա ընկալման եղանակները Ստեղծել նպաստավոր պայմաններ մշակութահեն հանրություն ձևավորվելու համար Խթանել գիտելիքի հանդեպ հետաքրքրությունը Նպաստել աշակերտի ազատ արտահայտման կարողությանը Մեծացնել դրական բովանդակության տարածքը աշակերտի առօրյայում Մեղմել հետպատերազմական ճգնաժամի բարոյահոգեբանական հետևանքները Նպաստել մայրաքաղաքի և համայնքների միջև կրթական-մշակութային կապերի ամրապնդմանը:
3.3	Անցկացման ժամկետ	2023 թ. ապրիլ-նոյեմբեր
3.4	Անցկացման վայր	Երևան, ՀՀ 10 մարզ
3.5	Ակնկալվող արդյունքներ	Ծրագիրը կնպաստի. Դպրոցահասակ երեխաների շրջանում հայ արդի արվեստի ճանաչելիության բարձրացմանը, մասնագիտական կողմնորոշմանը, արվեստի նկատմամբ հետաքրքրության աճին, աշակերտ-արվեստագետ ծանոթացմանն ու անմիջական շփմանը, աշկերտների աշխարհընկալման ընդլայնմանը, մտահորիզոնի զարգացմանը, արվեստի միջոցով բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավմանը: Ծրագիրը ակտիվորեն կտարածվի էլեկտրոնային հարթակում՝ հնարավորինս բաց հասանելիություն ապահովելով բոլոր հետաքրքրվողների համար:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Արվեստագետների հետ անցկացված հանդիպումներ և դրանց հիման վրա պատրաստված հեռուստահաղորդումներ 3600 դպրոցական 450 ուսումնական հաստատություն 50 արվեստագետ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011026425, հվհհ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ
Երևան, Իսահակյան 28
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001678, հվհհ 02514349
Հեռ.՝ 055 99 19 19
Տնօրեն՝
Ա. Կարապետյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 2
«30» «03» 2023 թ.
N ՄՇԴ-189-2023 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Քո արվեստը դպրոցում» միջոցառման իրականացման ծախսերի

№	Ծախսատեսակի անվանումը	Միավոր	Քանակ	Միավորի արժեքը (դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	**Վարձատրություն** *(ներառյալ հարկերը)* *				**21,740.0**
	Ծրագրի ղեկավար (1 մարդ, 7 ամիս)	մարդ/ամիս	7	190,000	1,330.0
	Համակարգող (1 մարդ, 7 ամիս)	մարդ/ամիս	7	130,000	910.0
	Կազմակերպիչ (1մարդ, 6 ամիս)	մարդ/ամիս	6	60,000	360.0
	Կազմակերպիչ (մարզային, 1 մարդ, 6 ամիս)	մարդ/ամիս	6	90,000	540.0
	Տեխնիկական համակարգող (1 մարդ, 6 ամիս)	մարդ/ամիս	6	120,000	720.0
	Ֆինանսական համակարգող (1 մարդ, 6 ամիս)	մարդ/ամիս	6	65,000	390.0
	Գնումների համակարգող (1 մարդ, 4 ամիս)	մարդ/ամիս	4	60,000	240.0
	Արվեստագետներ (դասախոսներ)	մարդ	50	345,000	17,250.0
2	**Հանրահռչակմանն ուղղված ծառայություններ**				**28,996.0**
	Գովազդային ինֆորմացիոն հոլովակ (ծրագիրը ներկայացնող, ծրագրի մասին պատմող հոլովակ, 30-40 վայրկյան)	հատ	1	456,000	456.0
	Առաջխաղացում էլեկտրոնային հարթակում. 8 ամիս անընդմեջ՝ սոցիալական կայքերի պաշտոնական էջերի վարում (facebook, Youtube, թվային հարթակներում տեսահոլովակների տարածում, ֆոտոնյութերի և ֆոտոպատմությունների տեղադրում, գովազդային արշավի մշակում, կոնտենտի մշակում (copywriting)	հատ	1	590,000	590.0
	Ոճի մշակում՝ ընդհանուր ոճի մշակում, գովազդային պաստառների դիզայն, նկարների մշակում սոցիալական ցանցերի համար	հատ	1	450,000	450.0
	Մշակույթի գործիչների մասին պատմող ֆիլմեր. նկարահանումներ, հետարտադրական աշխատանքներ՝ մոնտաժ, ձայնային ձևավորում, ոճի ձևավորում, գունաշտկում, գրաֆիկա (50 ֆիլմ, 1 հատ՝ 145,0 հ. դ.)	հատ	1	7,250,000	7,250.0
	Հեռուսահաղորդումների պատրաստում՝ հանդիպումների նկարահանում,հետարտադրական աշխատանքներ, մոնտաժ, սցենարի մշակում, ձայնային ձևավորում, ոճի ձևավորում, գունաշտկում, գրաֆիկա (50 հաղորդում, 1 հատ՝ 405,0 հ. դ.)	հատ	1	20,250,000	20,250.0
	Տեխնիկայի ապահովման, սպասարկման, տեղափոխման ծառայություններ				**19,700.0**
	Հեռուստահաղորդումներն իրականացնելու համար ձայնային վահանակի, անլար միկրոֆոնների, ձայնագրման սարքի, հավելյալ միակցման պարագաների ապահովում, սպասարկում, տեղափոխում (50 օր, 1 օրը՝ 57,0 հ. դ.)	հատ	1	2,850,000	2,850.0

3	Հանդիպումների/վարպետության դասերի ձայնային սպասարկումն ապահովելու համար ձայնային մոնիտորների (2 հատ), հավելյալ միակցման պարագաների սպասարկում, տեղափոխում (50 օր, 1 օրը՝ 30,0 h. դ.)	հատ	1	1,500,000	1,500.0
	Լուսային տեխնիկա հանդիպումների/վարպետության դասերի, հարցազրույցների անհրաժեշտ լուսավորությունն ապահովելու համար (տեղափոխման ծախսեր, միակցման լարերի սպասարկում, լուսային դիզայնի աշխատանքներ, էլեկտրոմոնտաժ) (50 օր, 1 օրը՝ 50,0 h. դ.)	հատ	1	2,500,000	2,500.0
	Լուսային վահանակի սպասարկում՝ հեռուստահաղորդումների և արվեստագետների մասին պատմող ֆիլմերի համար անհրաժեշտ լուսավորությունն ապահովելու համար. լուսային լեդ պանելներ 500w իրենց եռոտանիներով՝ 2 հատ, ուղղորդված լույսեր 450w իրենց եռոտանիներով՝ 3 հատ (50 օր, 1 օրը՝ 35,0 h. դ.)	հատ	1	1,750,000	1,750.0
	Մոնիտորի տեղափոխում, մոնտաժ, ապամոնտաժ, սպասարկում (50 օր, 1 օրը՝ 25,0 h. դ.)	հատ	1	1,250,000	1,250.0
	Նկարահանման սարքավորումների ապահովում, տեղափոխում, սպասարկում՝ տեսախցիկ Sony alpha 7s՝ 2 հատ, տեսախցիկ Canon 5d mark IV՝ 2 հատ, տեսախցիկ Gopro hero 11՝ 1 հատ, ոսպնյակ 24-70 L class՝ 2 հատ, ոսպնյակ 16-35 L class՝ 2 հատ, ոսպնյակ 70-200 L class՝ 2 հատ, եռոտանի՝ 3 հատ, անօդաչու թռչող սարք, Steadicam (50 օր, 1 օրը՝ 197,0 h. դ.)	հատ	1	9,850,000	9,850.0
4	**Տպագրական ծառայություններ**				**175.1**
	բեյջեր կազմակերպիչների և անձնակազմի համար (74 հատ, 1 հատը՝ 500 դրամ , ֆոտոպաստառ pressroll (3 մx2 մ, 6 հատ, 1 հատը 23,0 h. դ.)	հատ	1	175,100	175.1
	ԸՆԴԱՄԵՆԸ				**70,611.1**
	***Ծախսերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով**				

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011026425, հվհհ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Երեխաների հատուկ ստեղծագործական
կենտրոն» ՊՈԱԿ
Երևան, Իսահակյան 28
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001678, հվհհ 02514349
Հեռ. 055 99 19 19
Տնօրեն
Ա. Կարապետյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 3
«30» «03» 2023 թ.
N ՄՇԴ-189-2023 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող՝ փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2023 թ.

Կատարող կազմակերպության ղեկավար

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության
գլխավոր հաշվապահ
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատու՝

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N 4
«30» «03» 2023 թ.
N ՄՇԴ-122-2023 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան,Կառավարական տուն 2
ՀՎՀՀ՝ 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Հասցե՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը N « » « » 2023 թ.

Պետական մարմին՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար _____,
(անուն ազգանուն)

և Կազմակերպությունը, ի դեմս _____ -ի տնօրեն
կազմակերպության անվանում

_____ի, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
(անուն ազգանուն)

բովանդակային վարչության « » « » 2023 թ.-ի եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության « » « » 2023 թ.-ի թիվ ե - ՄՇԴ- եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Կազմակերպությունը պայմանագրի շրջանակներում իրականացրել է _____ միջոցառումը, իսկ Պետական մարմինն վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն

Գլխավոր քարտուղար՝

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Տնօրեն՝

Հավելված N 5
«30» «03» 2023 թ.
N ՄՇԴ-189-2023 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Կազմակերպության անվանումը՝ «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածը	«1148. Արտադպրոցական դաստիարակության ծրագրի» «11012. «Քո արվեստը դպրոցում» միջոցառում								
		2023 թ. բյուջեից հատկացվող գումարը՝ այդ թվում ըստ ամիսների (աճողական)								
		6 ամիս			9 ամիս			տարի		ԸՆԴԱՄԵՆԸ
		ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	դեկտեմբեր	
Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	463700	23537.3	29421.6	35306.0	41190.3	47074.6	52959.0	56488.0	70611.1	70611.1
Ընդամենը		**23537.3**	**29421.6**	**35306.0**	**41190.3**	**47074.6**	**52959.0**	**56488.0**	**70611.1**	**70611.1**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011026425, հվհհ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Երեխաների հատուկ ստեղծագործական
կենտրոն» ՊՈԱԿ
Երևան, Իսահակյան 28
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001678, հվհհ 02514349
Հեռ՝ 055 99 19 19
Տնօրեն՝
Ա. Կարապետյան
(ստորագրություն)
Կ. Տ.